ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
պարոն՝ Արեն Մկրտչյանին
Քաղաքացի՝ Արևիկ Արարատի Մնացականյանից
Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի
Բաղրամյան փողոց, շենք 10, բն. 33
էլ. փոստ՝ mnatsakanyan_89@internet.ru
Հեռախոսահամար՝ 096876566

Դիմում

/Ալավերդու համայնքապետարանի կողմից օրենսդրության հնարավոր խախտումների, աշխատանքի ընդունման գործընթացում խտրական մոտեցումների և անհիմն մերժումների վերաբերյալ/

Հարգելի պարոն մարզպետ.

Սույն թվականի օգոստոսի 10-ին ես դիմում եմ մուտքագրել Ալավերդու համայնքապետարան՝ ինձ աշխատանքի վերցնելու խնդրանքով: Սակայն երկար ժամանակ որևէ պատշաճ ընթացք կամ տեղեկատվություն չեմ ստացել իմ դիմումի վերաբերյալ, ինչի կապակցությամբ ստիպված եմ եղել կրկին դիմումներ ներկայացնել /այդ թվում՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով/:

Ի պատասխան իմ հարցումների՝ Ալավերդու համայնքապետարանը 2026 թվականի հոկտեմբերի 27-ի N UC-4377/26 գրությամբ պատասխանել է, թե իբր թափուր հաստիք առաջանալու դեպքում հայտարարվելու է մրցույթ, և առաջարկվել է հետևել համայնքի պաշտոնական կայքէջին:

Մինչդեռ հայտնում եմ, որ համայնքապետարանում առկա են աշխատատեղեր, ավելին՝ այս ընթացքում որոշ անձինք առանց պատշաճ մրցույթային հավասար պայմանների ապահովման կամ օրենսդրական պահանջների խախտմամբ ընդունվել են աշխատանքի /մասնավորապես՝ նախկինում աշխատանքից ազատված և բանկում աշխատած անձը առանց հրապարակային մրցույթի կրկին վերադարձվել է համայնքապետարան/՝ ամբողջությամբ անտեսելով իմ՝ ավելի վաղ ներկայացված գրավոր դիմումը և օրենքով սահմանված հերթականությունը:

Ցավոք, այս իրողությունը փաստում է, որ Ալավերդի համայնքում <<ծանոթի միջոցով>> աշխատանքի ընդունվելու արատավոր պրակտիկան դեռևս իսպառ չի վերացել: ՀՀ Վարչապետն իր բազմաթիվ ելույթներում անդրադարձել է նմանատիպ երևույթներին՝ հայտարարելով, որ յուրաքանչյուր քաղաքացի պետք է տեր կանգնի և պաշտպանի իր

իրավունքները: Ղեկավարվելով հենց այս սկզբունքով՝ չեմ պատրաստվում լռել իմ խախտված իրավունքների մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ Ալավերդու համայնքապետարանի ղեկավարության կողմից խախտվում են իմ՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված աշխատանքի ընտրության և հավասարության իրավունքները, խնդրում եմ.

1. Ուսումնասիրել Ալավերդու համայնքապետարանում վերջին ամիսներին կատարված աշխատանքի ընդունման և թափուր հաստիքների համալրման գործընթացների օրինականությունը:
2. Վերահսկողություն սահմանել Ալավերդու համայնքապետարանի կողմից քաղաքացիների դիմումների քննարկման և հավասար մրցույթային պայմանների ապահովման նկատմամբ:
3. Աջակցել իմ խախտված իրավունքների վերականգնմանը և տրամադրել գրավոր պարզաբանում ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

Կից ներկայացնում եմ՝

1. Ալավերդու համայնքապետարանի 27.10.2026 N UC-4377/26 գրության տեսաներածված տարբերակը,
2. Իմ կողմից ուղարկված դմումների և հարցումների տեսաներածված տարբերակները:

Դիմող՝ Արևիկ Մնացականյան

04.11.2026թ

ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի,
քաղաք Ալավերդու համանքապետարանի
համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղումաշյանին
ՀՀ Լոռու մարզ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի
Բաղրամյան փողոց, շենք 10, բն. 33
բնակչուհի՝ Արևիկ Արարատի Մնացականյանից

Դիմում

/տեղեկություն տրամադրելու վերաբերյալ/

Հարգելի պարոն Դ. Ղումաշյան.

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածներով՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկատվություն Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմում, ինչպես նաև համայնքային ենթակայության հիմնարկներում և կազմակերպություններում ներկայումս առկա թափուր հաստիքների /պաշտոնների/ ցանկի վերաբերյալ։

Խնդրում եմ տեղեկատությունը տրամադրել հետևյալ մանրամասներով.

1. Առկա թափուր հաստիքների /պաշտոնների/ անվանումները,
2. Տվյալ հաստիքների համար սահմանված որակավորման պահանջները /եթե առկա են/,
3. Նշված հաստիքների համար մրցույթների նախատեսվող կամ սահմանված ժամկետները։

Խնդրում եմ պատասխանը տրամադրել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված 5-օրյա ժամետում։

Դիմող՝ Արևիկ Մնացականյան

27.10.2026թ.

ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի,
քաղաք Ալավերդի համանքապետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Հեղինե Ճիճիլյանին
ՀՀ Լոռու մարզ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի
Բաղրամյան փողոց, շենք 10, բն. 33
բնակչուհի՝ Արևիկ Արարատի Մնացականյան

Դիմում

/տեղեկություն տրամադրելու վերաբերյալ/

Հարգելի տիկին Հ. Ճիճիլյան. Ես՝ Արևիկ Արարատի Մնացականյանս 10.08.2026 թվականին դիմում եմ ներկայացրել Ալավերդու համայնքապետարան աշխատանքի ընդունման վերաբերյալ, որը ուղղված է եղել Ձեզ։ Դիմումը ներկայացնելու օրվանից անցել է բավականին ժամանակ, սակայն ընթացքի վերաբերյալ որևէ տղեկություն չի տրամադրվել։

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը։

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ գրավոր տրամադրել տեղեկություն իմ դիմումի ընթացքի վերաբերյալ։

21.10.2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ alaverdimunicipality@gmail.com

N ԱՀ-4377/26
27
հոկտեմբեր2026թ.

ԱՐԵՎԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ
ՀՀ, Լոռու մարզ, Ալավերդի համայնք, ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ 3 , 3 , 36

Հարգելի՛ Արևիկ Մնացականյան

Ի պատասխան Ձեր՝ 10.08.2026 թվականի դիմումի՝ հայտնում ենք, որ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանում թափուր հաստիք առաջանալու դեպքում նշյալ հաստիքն զբաղեցնելու համար օրենքով սահմանված կարգով հայտարարվում է մրցույթ:

Մրցույթի հրապարակման օրվանից սկսած՝ մինչև դիմումների ընդունման վերջնաժամկետը, կարող են դիմել մրցույթի պահանջները բավարարող անձինք: Ուստի առաջարկում եմ հետևել alaverdi.am պաշտոնական կայքէջի հայտարարություններին և համապատասխան հայտարարություն լինելու դեպքում դիմել՝ թափուր հաստիքն զբաղեցնելու մրցույթին մասնակցելու համար:

Հիշեցման կարգով հավելեմ, որ վերոգրյալի մասին Ձեզ տեղեկացվել էր նաև բանավոր եղանակով:

Հարգանքով՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՃԻՃԻԼՅԱՆ

Կատ. Աշխատակազմի ղեկավար՝ Հ. Ճիճիլյան